«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-793-07.03.2024-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ առաջարկում ենք՝

1) նախագծով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ մասում լրացում կատարելու փոխարեն այդ մասն ուժը կորցրած ճանաչել.

2) նույն հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների տեխնիկական զննությունն իրականացվում է հաշվառող մարմնի կողմից տրված՝ տվյալ փոխադրամիջոցի գծով ընթացիկ հարկային տարվան նախորդող հաշվետու տարիների և ընթացիկ հարկային տարվա ավարտված ամիսների համար հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որում նշվում է նաև այն ժամանակահատվածը, որի համար տվյալ փոխադրամիջոցի մասով կատարված են փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորությունները:».

3) նախագծի հետագա քննարկումների շրջանակներում քննարկել փոխադրամիջոցների գույքահարկի, ինչպես նաև անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունների հաշվեգրումը (ձևավորումը) ամսական կտրվածքով կատարելու նպատակահարմարության հարցը (որպեսզի հնարավոր լինի կամավորության սկզբունքով հարկը վճարել մաս-մաս՝ մինչև վճարման վերջնաժամկետը)՝ միևնույն ժամանակ հարկի վճարման վերջնաժամկետը պահպանելով գործող տրամաբանությամբ՝ տարվա համար (որպեսզի հարկը մաս-մաս վճարելու պարագայում տույժերի հաշվարկման հարց չլինի):

Նախագծի ընդունման դեպքում վեցամսյա ժամկետում համապատասխան փոփոխություններ կկատարվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկ

վճարողների և անշարժ գույքի հարկի ու փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառման կարգը սահմանելու մասին» N 1288-Ն որոշման մեջ: